



## «Մյունիքի ներդրումային ֆորում» ներդրումների խթանումը Մյունիքի մարզում

Մյունիքի մարզն իր պատմությամբ հայտնի է որպես Հայաստանի ամենազարգացած արդյունաբերական տարածաշրջաններից մեկը: Տասնիններորդ դարից ի վեր Մյունիյաց աշխարհն իր պղնձով և մոլիբդենով հարուստ հանքային ռեսուրսներով զայթակղիչ է եղել արտասահմանյան մի շարք ներդրողների՝ հիմնականում ֆրանսիական ընկերությունների համար: Կապանի, Քաջարանի և հարակից տարածքների հին հանքերը ցայսօր տիրապետում են որոշակի ենթակառուցվածքների, ավանդական և մասնագիտական որոշակի ժառանգության, որոնք սերել են դեռ հին օրերից: Չնայած հանքարդյունաբերությունը զարգացած է Կապանում և Մեղրիում ավելի, քան օրինակ Գորիսում կամ Միսիանում՝ այն, ամեն դեպքում, հիմնարար արդյունաբերական ճյուղ էր համարվում Զանգեզուրի տարածաշրջանում: Հանքարդյունաբերությունն այսօր էլ կազմում է մարզի տնտեսության 85 %-ը: Այս առումով և կառավարությունը, և տեղական իշխանությունը, և տեղական և միջազգային կազմակերպությունները հատուկ քայլեր պետք է ձեռնարկեն մարզի տնտեսական կառուցվածքի բազմազանեցման հարցում: Մարզի տնտեսական բազմազանեցման արդյունավետ մոտեցումներից մեկը կարելի է համարել տեղի փոքր և միջին ձեռներեցության խթանումը, որը Մյունիքի պարագայում կհանգեցնի այլ ոլորտների զարգացմանը՝ մասնավորապես սննդի մշակման, ծառայությունների, արհեստների և այլ ոլորտներում: Այնուամենայնիվ, սա բավականին բարդ գործընթաց է և պետք է համակարգվի և իրագործվի ոչ միայն կենտրոնական և տեղական կառավարման մարմինների ջանքերի միջոցով, այլ նաև միջազգային հանրության և հասարակական կազմակերպությունների աջակցությամբ:

Համաշխարհային ներդրումների փորձը գալիս է ցույց տալու անդրազգային ընկերությունների կողմից ներդրումների ֆինանսավորման առաջնայնությունը, որն ուղի է հարթում այլ ներդրողների համար ևս: Բազմազանեցված ձեռներեցության ոլորտում ներդրումների գովաձանումը հնարավոր կդարձնի մի շարք ձեռքբերումներ, ինչպիսիք են օրինակ աշխատատեղերի ստեղծումը, ենթակառուցվածքների զարգացումը, աշխատուժի կարողությունների բարձրացումը, ինչպես նաև ընդհանուր բիզնես միջավայրի բարելավումը: Հաշվի առնելով վերոնշյալը՝ Մյունիքի մարզպետարանը և «Ալֆա Փլաս Քնսալթինգը» «Եվրոպայում անվտանգության և համագործակցության կոմիտեի» (ԵԱՀԿ) երևանյան գրասենյակի ֆինանսավորմամբ մշակել են Մյունիքի մարզի տնտեսության բազմազանեցման նախագիծը: Գործընկերները մանրամասն ուսումնասիրել, վերլուծել և վերհանել են մարզի զարգացման հեռանկարները, ընդգրկուն քննարկումների միջոցով հանգել ընդհանուր եզրակացությունների, որոնք զարգացվել են Մյունիքի ներդրումային ուղեցույցում<sup>1</sup>: Այս ուղեցույցը մշակվել է նախնառաջ մարզպետարանին աջակցություն ցուցաբերելու համար՝ տեղական ամուր տնտեսություն կառուցելու անհրաժեշտ

<sup>1</sup> Սույն աշխատանքը տեղադրված է <https://drive.google.com/folderview?id=0B82ghN4ViuX0aV94cGlrOGhmWjQ&usp=sharing>

առաջնայնությունները վերհանելու հարցում: Այդ առաջնայնությունները հիմնականում կապված են երեք գլխավոր ուղղությունների հետ, դրանք են՝ գյուղատնտեսություն/այգեգործություն, անասնապահություն և տուրիզմ: Ուղեցույցը գործնական տեղեկատվություն է տրամադրում ներդրողներին առ այն, թե ինչպես կարելի է ուղղորդել ներդրումային ծրագրի առանցքային դետերմինանտները տարածաշրջանային զարգացման պլաններում և նախաձեռնություններում: Ավելին, ԵԱՀԿ երևանյան գրասենյակը, Սյունիքի մարզպետարանը «Շուկաներ Մեդրիի համար» (M4M) ծրագրի և «Ուորլդ Վիժն Արմենիա» կազմակերպության հետ համատեղ սույն թվականի նոյեմբեր 11-13 կազմակերպեց Սյունիքի ներդրումային ֆորումը, որը տեղի ունեցավ Սյունիքի մարզկենտրոն Կապանում: Ծրագրի հիմնական նպատակն էր աջակցություն ցուցաբերել Սյունիքի մարզպետարանին մարզի տնտեսության ոչ հանքարդյունաբերական ոլորտներում ներդրումների խթանման գործում:

Ֆորումին մասնակցեցին 170 հոգի, որոնք ներկայացնում էին դոնոր կազմակերպություններ, դոնորային ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրեր, ՀՀ Տարածքային կառավարման նախարարությունը, ՀՀ Գյուղատնտեսության նախարարությունը, Մեդրիի տարածաշրջանի բոլոր համայնքները, գյուղատնտեսության մասնավոր սեկտորը, զբոսաշրջության և վերականգնվող էներգիայի սեկտորները, ինչպես նաև դեսպանատներ և Հայաստանում այլ դիվանագիտական առաքելություն իրականացնող մարմիններ: Միջոցառման հանդիսավոր բացումն արվեց Տարածքային կառավարման նախարարի, ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ղեկավարի և Սյունիքի մարզպետի կողմից:

- ԵԱՀԿ-ն խիստ հետաքրքրված է օգնության ձեռք մեկնելու Հայաստանի կառավարությանը Սյունիքի մարզի տնտեսական զարգացման հեռանկարների բազմազանեցման և տնտեսական անվտանգության ռիսկերի նվազեցման գործում: Այս ֆորումի, տնտեսական բազմազանեցման նախագծի և գործընկեր կազմակերպությունների աջակցության շնորհիվ հնարավոր կլինի լուծել այս խնդիրը, - ասաց ԵԱՀԿ դեսպան Անդրեյ Սորոկինը բացման արարողության ժամանակ:

Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանը հավելեց.

- Սյունիքի մարզն ունի գյուղատնտեսության, զբոսաշրջության և սննդի վերամշակման ոլորտում թերգործարկված ռեսուրսներ, որոնք կարող էին հեշտությամբ աշխատատեղեր ստեղծել, բարձրացնել եկամուտը՝ դրանով իսկ բարձրացնելով պետբյուջե վճարվող հարկերը: Չնայած այն հանգամանքին, որ Սյունիքի մարզը հիմնականում առանձնանում է հանքարդյունաբերությամբ՝ այդուհանդերձ, մենք կարևորում ենք տարածքային տնտեսության հավասարակշռումն իրականացնել մարզի այլ հնարավորությունների հաշվին:

Միացյալ Թագավորությունից ժամանած ԵԱՀԿ փորձագետ Ֆելիքս Քումո-Էմփոֆոն բացման արարողության ժամանակ ներկայացրեց զարգացման մոդելավորումը՝ որպես ներդրումների խթանման գործիք, որը թերևս ենթակա է հետագա մշակման և տարածքային առանձնահատկություններին համապատասխանեցման:

Ըստ Սյունիքի մարզպետարանի ներկայացուցչի՝ Ջարգմացման հիմնադրամ կատեղծվի տեղական իշխանությունների կողմից՝ ի հետևանք տարածքային տնտեսության զարգացման հեռանկարների բազմազանեցման քաղաքականության: Այս հիմնադրամի

շրջանակներում գոյություն կունենա ֆինանսական բազա, որը աջակցություն կցուցաբերի Սյունիքի մարզում տնտեսության բազմազանեցման համատեքստում գործող բիզնեսներին: Միջոցառման ժամանակ անցկացվեցին չորս կլոր սեղան քննարկումներ՝ «Պտղագործություն և սննդի վերամշակում», «Անասնաբուծություն և վերամշակում», «Զբոսաշրջություն և հյուրընկալություն» թեմաներով, ինչպես նաև հատուկ կազմակերպված կլոր սեղան քննարկում դիվանագետների մասնակցությամբ: Այս միջոցառումների ժամանակ անցկացվեցին մի շարք թեմատիկ ներկայացումներ, քննարկումներ, հարցուպատասխան: Պաշտոնական հանդիպումներից զատ այցելություններ եղան նաև արտադրամասեր, շրջակա միջավայրի հետ կապված ծրագրեր և տեսարժան վայրեր, որպեսզի մասնակիցները տարածաշրջանի հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվություն ստանան առաջին աղբյուրներից:

«Գյուղատնտեսական ապրանքների արտադրություն և վերամշակում» աշխատաժողովը անցկացվեց M4M ծրագրի շրջանակներում, որի ընթացքում քննարկվեցին հետևյալ թեմաները՝

- «Բարձրորակ պտղաբուծության հեռանկարները Մեդրիում», Եվգենի Բյազանով, Հելվետաս;
- «Սրգի վերամշակման հեռանկարները», Արթուր Հովհաննիսյան, Ալֆա Փլաս Քնսալթինգ;
- «Չրարտադրության հնարավորությունները Մեդրիում», Նառա Ասլանյան, Շուկաներ Մեդրիի համար;
- «Ջերմոցային նոր տեխնոլոգիաները պտղաբուծության և ծաղիկների մշակման համար», Գագիկ Սարդարյան, Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն (CARD);
- «Արդյունավետ ոռոգումը՝ որպես բարձրորակ պտղաբուծության կարևոր նախապայման», Գուրգեն Եղիազարյան, Հայաստանի ազգային ագրարային համալսարան (ՀԱԱՀ);
- «Խոտաբույսային թեյերի հավաքումը, մշակումն ու արտադրությունը», Արաքսյա Գրիգորյան, Ալֆա Փլաս Քնսալթինգ:<sup>2</sup>

Այն բոլոր առաջարկությունները, որոնք արվեցին քննարկումների և մասնավորապես հարցուպատասխանի ժամանակ, պետք է հաշվի առնվեն տարածքի տնտեսական զարգացման հարցում որոշումներ կայացնելիս: Առաջարկությունները հիմնականում վերաբերում էին հետևյալին՝

- Մեդրիի տարածաշրջանը մեծ հեռանկարներ ունի վաղահաս մրգերի արտադրության տեսանկյունից (հաշվի առնելով մասնավորապես եղանակային պայմանները և մոտավորապես 450 հեկտար անմշակ հողատարածքի առկայությունը): Վաղահաս մրգերը բարձր գին ունեն շուկայում և մեծ պահանջարկ են վայելում արտասահմանում;
- տարածաշրջանն ունի նաև ակոհոլային խմիչքների արտադրության մեծ հեռանկարներ;
- Մեդրիի տարածաշրջանում նկատվում է ցածրորակ նռան ավելցուկ;

<sup>2</sup>Որոշ ներկայացումները հասանելի են

<https://drive.google.com/folderview?id=0B82ghN4ViuX0aV94cGlrOGhmWjQ&usp=sharing>

- Հայաստանում բարձրորակ մրգերի պահանջարկը գերազանցում է առաջարկը: Չրի մոտավորապես 50% ներմուծվում է:
- տարածաշրջանի կանայք հիմնականում ներգրավված են մրգի վերամշակման աշխատանքներում, այդ իսկ պատճառով նոր վերամշակման կետերը նոր աշխատատեղեր կտրամադրեն տեղի կանանց:
- Հայաստանի հարկային և մաքսային ծառայությունները բավականաչափ զարգացած չեն և արհեստականորեն բարդություններ են ստեղծում վերամշակման և արտահանման համար, ինչպիսիք են օրինակ տարբեր տեղեկանքների անհրաժեշտությունը, թանկարժեք լաբորատոր ուսումնասիրությունները և այլն:
- նկատվում է ֆինանսական շուկաների և ցածր տոկոսադրույքով երկարաժամկետ վարկերի բացակայություն:
- ջերմաստիճանի տնտեսությունների ներդրումը տարածաշրջանում կնվազեցնի ներկրումը:
- աշխարհում խոտաբույսային թեյերի աճող պահանջարկ է նկատվում, իսկ տարածաշրջանն այս առումով մեծ հեռանկարներ ունի:
- համաշխարհային կլիմայական փոփոխությունները, ինչպես նաև տարածաշրջանի էկոլոգիական իրավիճակը մարտահրավերներ են նետում գյուղատնտեսության ոլորտում դերակատարների համար՝ դրանով իսկ պարտադրելով վերջիններիս պատրաստ լինել օդի բարձր ջերմաստիճանին, ջրի սակավությանը, ուժեղ քամիներին և այլն: Տեղական ինքնակառավարման մարմինները պետք է լուրջ քայլեր ձեռնարկեն էկոլոգիական խնդիրների լուծման համար:

Նիստի ընթացքում ընդհանուր որոշումներ և առաջարկություններ արվեցին վերոնշյալ խնդիրները լուծելու համար: Նախևառաջ, առաջարկվեց ստեղծել տվյալների բազա, որը կներառի տեղեկատվություն նաև չօգտագործված տարածքների վերաբերյալ: Այս տեղեկատվությունը պետք է հասանելի լինի և ազարակատերերի, և տեղական իշխանությունների համար: Ինչ վերաբերում է մրգի արտադրությանը, ըստ Նառա Ասլանյանի, ով «Շուկաներ Մեդրիի համար» ծրագրի արժեշտյանների գծով փորձագետն է, M4M ծրագրի շրջանակներում արդեն իսկ մի շարք լուրջ քայլեր են ձեռնարկվել դրանց զարգացման ուղղությամբ: Ցայսօր ծրագրի համատեքստում տարածաշրջանի մի շարք ազարակատերերի համար բազմիցս իրակացվել են դաընթացներ՝ ներառյալ արտադրության, բիզնես կառավարման և շուկայագիտական խորհրդատվություն: Որոշակի գործիքների և հմտությունների տրամադրումը, տնտեսական հնարավորություններին հասանելիության ապահովումը, ինչպես նաև դրանց ընթացքի մշտադիտարկումը և գնահատումը օգնում է ազարակատերերին հստակեցնել բիզնես նպատակները, հասնել այդ նպատակներին և ապահովել կայուն զարգացում: Ծրագրի շնորհիվ փոքր քանակությամբ և բնական եղանակով չիր է պատրաստվել, փաթեթավորվել, պիտակավորվել և արտահանվել Շվեյցարիա և Ռուսաստանի Դաշնություն, ընդ որում այդ չրերը պատրաստվել են ծրագրի շրջանակներում ստեղծված կանանց մի խմբի կողմից: Ավելին, ծրագիրը աջակցություն է ցուցաբերել փոքրածավալ արտահանման բոլոր գործընթացներին: Հիմնվելով նշված դրական արդյունքների վրա՝ Սյունիքի մարզի ձեռներեցների միության նախագահ պրն. Արարատ Վարդանյանը քննարկման ժամանակ նշեց, որ բացի Մեդրիի արդեն իսկ հայտնի կուլտուրաներից, մարզի այլ հատվածներում՝ մասնավորապես Կապանում, Գորիսում և Միսիանում,

աճում են բարձրակ մրգեր, ինչպիսին օրինակ խնձորն է, տանձը, որոնք ևս կարող են չրարտադրության համար շատ արդյունավետ լինել: Դրանից էլնելով նա առաջարկեց թիմին ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումները հնարավորության դեպքում տարածել նաև մարզի այլ հատվածների վրա:

M4M-ը մի շարք քայլեր է ձեռնարկել նաև Մեղրիի տարածաշրջանի ֆինանսական շուկայի զարգացման ուղղությամբ: Մի քանի ֆինանսական հաստատությունների և հիմնդրամների տեխնիկական և գործնական աջակցություն է ցուցաբերվել Մեղրիի տարածաշրջան համապատասխան գործարքների ներմուծման հարցում:

«Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի» ներկայացուցիչ Սուրեն Շատվորյանը քննարկումներից մեկի ժամանակ նշեց.

- Մենք պատրաստակամ ենք օժանդակել էներգիայի արդյունավետության բարձրացմանը և շրջակա միջավայրի պաշտպանության բարելավմանը անհրաժեշտ ներդրումների և տարածաշրջանում դրանց տեխնիկական հմտությունների զարգացման տեսքով, և եթե լինեն առաջարկություններ, ապա հնարավոր է իրականացնել համատեղ ծրագրեր:

Ջերմատների կառուցման անհրաժեշտության վերաբերյալ քննարկման ժամանակ CARD հիմնադրամի տնօրեն Գագիկ Սարգսյանը տնտեսական աճի ապահովման տեսանկյունից կարևորեց նոր տեխնոլոգիաների ներդրումը՝ հաշվի առնելով միջազգային լավագույն փորձը, որը կօգնի նվազեցնել մեկ միավորի ծախսը, կբարձրացնի որակը՝ ի հեճուկս մեծածավալության ապահովմանը:

Արդյունավետ ոռոգման վերաբերյալ ներկայացման ժամանակ ՀԱԱՀ պրոֆեսոր Գուրգեն Եղիազարյանը առաջարկեց կաթիլային ոռոգման սարքավորումների, եղանակի, հողի և ջրի քանակության չափիչ էլեկտրական սարքավորումների տարածաշրջանում պահանջարկի վերլուծություններ կատարել և լուծումներ տրամադրել ազարակատերերին:

Ըստ փոքր և միջին մասշտաբի գործարարների՝ պետք է վերանայվեն Հայաստանի Հանրապետության ընդհանուր հարկային, ֆինանսական և մաքսային ծառայությունները՝ առավել հարմար պայմաններ ստեղծելու նպատակով (օրինակ՝ հարկային արտոնություններ, սակավ բյուրոկրատիա, ցածր տոկոսադրույքով վարկեր և այլն): Այս ամենը նաև զարկ կտա տարածաշրջանում տեղական և միջազգային կազմակերպությունների ներդրումներին:

Քննարկումների ընթացքում բնապահպանության և շրջակա միջավայրի խնդիրները ձևակերպվեցին որպես կարևորագույն խնդիրներ տարածաշրջանի համար: Հանքարդյունաբերության էկոլոգիական ազդեցությունը տարածաշրջանում հետևյալն է.

- ջրի աղիություն և սակավություն, որը շահագործման ընթացքում քաղցրահամ ջրի մեծ քանակության վատնման հետևանքն է;
- ծանր մետաղների արտանետում և էկոհամակարգի աղտոտում;
- հազարավոր տոննա հանքաքարի տեղաբաշխումը գետերում առաջացնում է նստվածք և ենթարկում ջուրը էռոզիայի;
- բարձր թունավոր ցիանիդի ներխուժումը գրունտային և մակերևութային ջրեր և ընդհանուր էկոհամակարգ:

Տարածաշրջանի էկոլոգիական իրավիճակի կարևորությունը թերագնահատված է: Ըստ «Մեղրիի շրջանի այգեգործության զարգացման» ՀԿ-ի նախագահ Ալեքսանդր Հովհաննիսյանի.

- Շատ ծառատեսակներ ուղղակի չեն կարող դիմակայել ոռոգման ջրի աղտոտվածությանը:

Չնայած ջրի աղտոտումը դեռ շարունակում է մնալ բավականին նուրբ խնդիր՝ ջրի մշտադիտարկման հետազոտություններից մեկը հատուկ շեշտադրություն է կատարում. «Աղտոտման մակարդակը թույլատրելի սահմաններում է: Ի համեմատություն Դանուբի ջրերի աղտոտման տարեկան ցուցանիշների՝ աղտոտման մակարդակն այստեղ չի գերազանցում թույլատրելի սահմանները»:<sup>3</sup>

Ինչևէ, կլոր սեղան քննարկումների բոլոր մասնակիցները շեշտեցին, որ կառավարության դերը տարածաշրջանի էկոլոգիական խնդիրների լուծման հարցում չափազանց կարևոր է և հրամայական, որի համար լուրջ միջոցներ պետք է ձեռնարկվեն:

Քննարկումների ավարտին մասնակիցները կարևորեցին նմանատիպ միջոցառումների կազմակերպման ավանդույթի անհրաժեշտությունը, որի հետևանքով կբարելավվի տարածաշրջանի ընդհանուր հանրայնացումը և հստակ քայլերի ձեռնարկումը, որն էլ իր հերթին զարկ կտա Սյունիքի մարզում կատարվող ներդրումների աճին: Այնուամենայնիվ, ըստ Սյունիքի մարզպետարանի ներկայացուցչի ելույթի, տեղական իշխանությունների կողմից «Զարգացման հիմնադրամ» կստեղծվի՝ որպես տնտեսության զարգացման բազմազանեցման հետևանք: Այս հիմնադրամը կունենա ֆինանսական բազա և օժանդակություն կցուցաբերի Սյունիքի մարզում բիզնես բազմազանեցման լույսի ներքո գործող նախագծերին: Հաջողությամբ պսակվելու պարագայում այս մոդելը կզարգացվի և կհամապատասխանեցվի Հայաստանի Հանրապետության այլ մարզերին ևս:

---

<sup>3</sup> <http://www.epress.am/en/2013/02/06/issues-of-the-kura-araks-river-basin-now-and-then.html>